ՀԱՎԿԻԹ-ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Հայերի ժողովրդական հավատալիքներում թռչնի ձուն, օժտված լինելով բազմաթիվ մոգական հատկություններով, կատարում է նաև հմայական պահպանակի դեր և դասվում է բնական կենդանական պահպանակների շարքը։

XVIII—XIX դդ. Հայաստանում և հայաբնակ զանազան վայրերում որպես հմայական պահպանակ էին օգտագործում հավի, լորի, ծիծեռնակի, ջայլամի, կաչաղակի, իսկ մեր օրերում՝ հիմնականում հավի ձուն։ Ձու-հմայակներն օգտագործվում էին ինչպես հում, այնպես էլ եփված վիճակում (խաշած, ձվածեղ)։ Պահպանակ էր համարվում ոչ միայն ամբողջական ձուն, այլև նրա մասը՝ կեղևը։ Պատրաստվում էին նաև արհեստական ձվեր։

Հավկիթն ունի բազմաֆունկցիոնալ պահպանակներին բնորոշ բոլոր հատկությունները՝ մարդկանց, նրանց արժեքավոր իրերը, կենդանիներին, բնակարանը, բույսերը պաշտպանում է չար աչքից, չար ոգիներից, կանխարգելում և բուժում է հիվանդությունները, երջանկություն, բարիք է բերում, կիրառվում է ծեսերում, տոներում, կախարդանքում, գուշակություններում, կրում է այս և հանդերձյալ աշխարհի կապի գաղափարը, անցել է քրիստոնեական եկեղեցի։

Հավկիթի ամենակարևոր գործառույթներից մեկը ծննդկանին և նորածին երեխային պաշտպանելն էր չար աչքից ու չար ուժերից՝ քաջքերից, ալքերից և այլն, որոնք առավել վտանգավոր էին նախա և ետծննդաբերական շրջանում։ Սրանով էր պայմանավորվում այն սովորույթը, որի համաձայն երեխան ծնվելուց հետո առաջին կերակուրը, որ տրվում էր մորը, ձվածեղն էր։ Իսկ երեխային լողացնելիս ջրի մեջ հավկիթ էին դնում[1]։ Երեխաների համար ձուն օգտագործվում էր նաև նրանց խոսել ու քայլել սովորելու ժամանակ։ Մանիսայում (Արարկիր) խոսելու փորձեր կատարող երեխաներին ծիծեռնակի ձվի կեղևով ջուր էին խմեցնում, որպեսզի «լեզվանի» դառնային[2]։ Զանգեզուրում ուշ քայլող երեխաներին տանում էին Սիծեռնավանքի սգռավի գերեզմանի քարի մոտ, մոմ էին վառում, մեխ ու ձու էին դնում քարի տակ և երեխայի ոտները լվանում, որպեսզի շուտ քայլեր[3]։

Տունը սատտանելու համար հավկիթն օգտագործվում էր դրսից, ներսից և դրանց սահմանի վրա՝ շեմքում։ Ակնում, օրինակ, նոր բնակարան կառուցելիս, առաստաղի մեծ գերանի փողոցի կողմը նայող ծայրին մի հավկիթ էին դնում[4]։ Թարինի շրջանում մինչև հիմա խաշած հավկիթ են դնում տան շեմքի տակ, որպեսզի «տարտն էլ նրա նման հաստվի» և տան ունեցվածքին վնաս չտան, իսկ ոռան գլխին, դրսի կողմից, Զատկին կարմիր ներկած հավկիթներ են ամրացնում խմորով կամ գոմաղբով, որպեսզի այն գռավի նատոր՝ ուշադրությունը չար հայացքը շեղի տնից[5]։ Նույն նպատակով Լոռիում, Զան-

---

1 Մ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 309։

2 Ե. Սաղաթիել. Կախարդություն ու թովչություն Մանիսայի մեջ.—«Բյուրակն», 1899, Կ. Պոլիս, էջ 440։

3 Մ. Լիսիցյան. նշվ. աշխ., էջ 274։

4 Հ. Կ. Ճանիկյան. Հնություններ Ակնա. Թիֆլիս, 1895, էջ 164։

5 Հայաստանի Պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի արխիվ (այսուհետև՝ ՊԹԱԲԱ), Ա. Իսրայելյան. Թալին. 1977, էջ 33, 39, 49։

գեզուրում, Արցախում, Վասպուրականում հավկիթը դնում էին ջրով լի թասի մեջ և զետեղում տան ներսում ամենաաչքի ընկնող տեղում։ Բացի այդ, դռան դիմացի պատից կախում էին գույնզգույն թելերով կամ ապակե մանր ուլունքներով նախշած հավկիթ։ Եթե հավկիթը ժամանակի ընթացքում ճաքում էր նշանակում էր, որ նրան չար աչք էր դիպել։ Այս սովորությունը մինչև այժմ պահպանվել է Լեռնային Ղարաբաղի գյուղերում[6]։

Բույսերը պաշտպանելու համար թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում տարածված էր ձվի կեղևի գործածությունը հատկապես Մուշից, Ալաշկերտից Սասունից, Բայազետից ներկայիս Հայաստանում վերաբնակվածների ու համշենահայերի շրջանում։ Կեղևները կախում են խաղողի թփերին, մանդարինի և այլ պտղատու ծառերին, լոբու ձողիկներին, փայտի վրա անցկացրած խրում այգում, դաշտերում, բանջարանոցներում՝ ամբողջ տարածությունը չարից վնասազերծելու նպատակով։ Համշենահայերը գերադասում են հատկապես վայրի խնձորենու ճյուղերը, որոնք անկախ հավկիթից, զորեղ պահպանակի դեր են կատարում[7]։

Կենդանիներին չար աչքից և չար ոգիներից պաշտպանելու համար հավկիթը տարբեր ձևերով էին գործածում. Թալինի շրջանում ինչպես տան, այնպես էլ գոմի դռան գլխին ամրացնում էին Զատկին կարմիր ներկած ձվերի կեղևները, Ախալքալաքում և Ախալցխայում աղոթած ձուն կախում էին կովի ճակատին[8]։ Ամենուրեք գարնանը, կենդանիներին առաջին անգամ դաշտ դուրս հանելու արարողության ժամանակ, նրանց ճակատին հավկիթ էին ջարդում։ Նույն գործողությունն էին կատարում նաև հակառակ պարագայում՝ երբ նոր դնված կենդանին առաջին անգամ գոմ պետք է մտներ, որպեսզի չար ոգիները, որոնք հավկիթը ջարդելիս փախչում էին, նրա հետ միասին ներս չմտնեին[9]։

Կենդանի և թռչուն ծնվելիս կրկին հավկիթն ու նրա կեղևը կարևոր նշանակություն ունեին։ Սյունիքում, օրինակ, երբ որձ հորթ է ծնվում, ճակատին կաչաղակի ձու են ջարդում, որպեսզի «ուժեղ, առողջ ու լավ հարու սովոր լինի»[10]։

Սևանի ավազանում հավի ճտերը ձվից դուրս գալուց հետո կեղևներն անցկացնում են ցախավելի ճյուղերին ու դնում են գոմի դռան վերնամասում, որպեսզի ճտերին չար աչք չդիպչի։ Ի դեպ, ցախավելը ևս օժտված էր չարխափան հատկությամբ[11]։

Զանգեզուրում ճտերը դուրս գալուց հետո այդ ձվերի կեղևները 40 օր սպասում էին, հետո թաղում, որպեսզի ճտերը առողջ մեծանային[12]։

Շերամի որդերին չար աչքից պաշտպանելու համար ձուն ջրով լի թասով կամ առանց թասի դնում էին որդերի մոտ կամ էլ կախում էին շերամատան կենտրոնական սյունից[13]։

Գործվածքներից հատկապես գորգերը, կարպետները, կտորները, շալերը, գոտիները էին պաշտպանում չար աչքից ու չար ոգիներից հավկիթի օգնությամբ։ Դրանք գործելու ողջ ընթացքում ձուն պետք է գտնվեր պաշտպանվող առարկայի կողքին՝ հաստոցի, տորքի վրա և այլն։ Նույնը վերաբերում է և հացին. օրինակ Արցախում հաց թխելիս ձուն դնում են թոնրի մոտ նախ որ

---

6 ՊԹԱԲԱ, Հոկտեմբերյան, էջմիածին, Աշտարակ, 1973, էջ 10։ Ղարաբաղ, 1974, էջ 1։

7 ՊԹԱԲԱ, Թալին, էջ 49։ Պտղնի, 1976, էջ 3—4։ Սուխումի, 1976, տետր 1, էջ 20, տետր 2, էջ 8։

8 ՊԹԱԲԱ, Թալին էջ 49։ Ախալքալաք, Ախալցխա, 1978. էջ 7։

9 Վ. Պետրոյան. Սասնա աղգագրություն. Երևան, 1965, էջ 114։

10 ՊԹԱԲԱ, Ղափան, 1985, էջ 33։

11 ՊԹԱԲԱ, Կումո. Մարտունի. 1982, էջ 35։

12 ՊԹԱԲԱ, Անգեղակոթ. 1983, էջ 1։

13 Ա. Պետրոսյան. Շերամապահությունը Հայաստանում (դիսերտացիա). Երևան, 1977, էջ 150։

պնսպի թոնրին աչք չդիպչի և այն չճաքի ու չքանդվի և երկրորդը՝ որ հացը չվնասվի ու առատ լինի[14]։

Այժմ, հատկապես գյուղերում, հավկիթ են ջարդում նաև նոր գնած ավտոմեքենայի վրա, ձուն դնում են թանկարժեք առարկայի վրա։ Նախկինում թանկարժեք իրի մոտ ջրով լի թասի մեջ էին ձուն դնում[15]։

Արտակարգ զորություն էր վերագրվում օրհնված ձվին։ Այն նույնիսկ կարող էր պաշտպանել հրդեհից ու դժբախտությունից[16]։

Հիվանդություններ բուժելու նպատակով ձուն հիմնականում երկու ձևով էր օգտագործվում. առաջինը՝ անմիջապես մարմնին կպչելով և երկրորդը՝ տարածության վրա։ Մատնաշունչը, խոցապալարը և այլ թարախոտ վերքեր բուժելու համար ձվի դեղնուցը, մեղրը և ալյուրը խառնում են և այդ խմորը դնում են վնասված մասում[17]։ Երբ աչքն ուռչում է, ձուն խաշում են և տաք վիճակում դնում են աչքին[18]։ Նորալուսնից հիվանդացած երեխաներին բուժելիս ձվի դեղնուցը խառնում են հողի հետ և քսում երեխայի գլխին, կապում են և մի քանի ժամից՝ լվանում (հողին՝ հատկապես սրբատեղիների, ևս տարբեր հիվանդություններ բուժելու ունակություն է վերագրվում)[19]։

Ձեռագիր թալիսմաններից հայտնի է, որ հնում տենդը բուժում էին հավկիթով. այն խորովում էին և ուտեցնում ջերմող հիվանդին[20]։

Տարածության վրա հավկիթով հիվանդին բուժելու եղանակները մի քանիսն են՝ կախված նրանից, թե ձուն որ տեղում է դրվում։ Որոշ դեպքերում այն դրվում էր հիվանդի կողքին. օրինակ, Զանգեզուրում հիվանդ ծննդկանի և մանկան մահճակալի մոտ 2—3 հավկիթ էին դնում ջրով լի թասի մեջ կամ հավկիթը կախում էին նրանց մոտ[21]։ Այսպիսով, չար աչքը հիվանդից հեռացնելով, ձուն չէր թողնում, որ աչքը դիպչեր հիվանդին։ Ի դեպ, հիվանդության առաջացման պատճառներից մեկն էլ չար աչքի ազդեցությունն էր։

Տարածության վրա բուժելու երկրորդ դեպքում հավկիթը թաղում էին ճանապարհների հատման կետում։ Խորշալուում գորտնուկը բուժելու համար գրբացը մի ձեռքին աղը բռնած, մյուսով գրում էր կամ աղոթքը շշնջում հավկիթի վրա, այնուհետև հավկիթը տանում էին հինգ կամ յոթ ճանապարհների խաչմերուկն ու այնտեղ թաղում[22]։ Ժողովրդական հավատալիքներում աղը ևս զորեղ միջոց էր չար աչքի դեմ. օրինակ, երբ չար աչքով մարդը տնից դուրս է գալիս, ձեռքի ափի մեջ աղ են լցնում և անմիջապես նրա հետևից փչում, համապատասխան աղոթք ասելով։

Երրորդ դեպքում ձուն թաղում էին այն տեղում, որտեղ պետք է բուժվեր հիվանդը։ Վարանդայում հանգուցյալից վախեցած մարդուն տանում էին նրա գերեզմանը, հողը քանդում էին, հավկիթը մեխով ծակում ու թաղում էին այդտեղ։ Հետո իրենց հետ տարած ջրի մի մասը գերեզմանաքարի վրա էին

---

14 ՊԹԱԲԱ, Ղարաբաղ, էջ 15։

15 Ե. Լալայան. Վարանդա.—«Ազգագրական հանդես», Բ, Թիֆլիս, 1897, էջ 240։

16 Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու.—«Ազգագրական հանդես», 16, Թիֆլիս, 1907, էջ 17։

17 ՊԹԱԲԱ, Ղուկասյան, 1980, էջ 8։

18 ՊԹԱԲԱ, Աքալաթալաք, Ախալցխա, էջ 6։

19 ՊԹԱԲԱ, գ. Մաքրավանք, Հրազդանի շրջ., 1981, էջ 15։

20 А. А. Одабашян. Народные верования армян (по материалам рукописных талисманов XIV—XIX вв.).—Кавказский этнографический сборник, VI, М., 1976, с. 118.

21 Г. Ф. Чурсин. Амулеты и талисманы кавказских народов.—Сборник материалов для описания местностей и племен Кавказа Махач-Кала, 1929, вып. 46, с. 207.

22 Ե. Լալայան. Բորշալուի գավառ.—«Ազգագրական հանդես», 10, Թիֆլիս, 1908 էջ 243։

լցնում, մնացածը խմեցնում էին վախեցածին, այնուհետև անսպասելիորեն կոտրում էրս ջրի ամանը[23]։

Հիվանդություններ բուժելու նպատակով ձուն տանում էին նաև քրիստոնեական ասպետաքրիստոնեական սրբատեղիները, որոնցից շատերը դեռևս չեն կորցրել իրենց նշանակությունը։ Այսպես, Փեղարքունիքում մրսչև այժմ էլ գորտնուկները ասցկացնելու համար հաշվում են դրանց քանակը, նույն թվով գարու հատիկներ են վերցնում, դրանցից մեկի ծայրը ջարդում են, դեն գցում, վերցնում են մի հավկիթ և գարու հատիկների հետ մեկտեղ թաղում են որպէս սատուռի կամ եկեղեցու շեմին ու ասում. «Դու ստեղ փեր, է թող ընդ փեի»[24]։ Վարանդայում եղճատենդը բուժելու համար գնում էլ-սարտար գյուղը նշանավոր Խյունեյ աղբյուրը, զույգ մոմ էին վառում, երկու հավկիթ և երկու սեխ թաղում ջրի մոտ, աղոթում էին և այդ ջրով լողանում[25]։ Ն. Աբեղյանը ևս վկայում է, որ մաշկային հիվանդությունները և տենդ բուժելու նպատակով աղբյուրի մեջ հավկիթ էին թաղում և այնտեղ լողանում[26]։

Բուժման երրորդ եղանակը մարմնին կպցնելով և տարածությունից բուժելու միջանկյալ ձևն է, երբ գործողության ժամանակ կա ձվի անմիջական մասնակցությունը, բայց այն մարմնին չի կպչում։ Այսպիսի օրինակ է երեխային կոխվելուց (չարքերի ազդեցությամբ հիվանդանալ) բուժելը. հավի առաջին ձուն դատարկում էին, նրանով 40 անգամ ջուր էին չափում, տաքացնում էին ու լցնում ծննդկանի գլխին[27]։

Հմայական բժշկության մեջ ձուն գործածվում էր նաև հիվանդությունը կանխարգելելու նպատակով։ Մեծ Զատկի ավագ հինգշաբթի օրը ձու էին ներկում, որպեսզի կոլինջ (հաստաղիքի հիվանդություն) չունենան[28]։

Ժողովրդական պատկերացումներում հավկիթի բուժող ուժը պայմանավորված է նրա երկու հիմնական հատկություններով՝ չար աչքի և չար ոգիների ազդեցությունը կլանելու զորությամբ և իր մաքրագործող ունակությամբ։ Այս երկու հատկությունները վառ արտահայտված են բուդդակների (XVIII դարում Բելոռուսիայից Ուկրաինայում վերաբնակված գյուղացիներ) հավատալիքներում՝ հիվանդության պատճառը կախարդանքով գուշակելով այն բուժելու ժամանակ։ Կախարդուհին աջից ձախ երեք անգամ ձուն պտտում էր հիվանդի գլխի, դեմքի, ձեռքերի, այնուհետև ողջ մարմնի շուրջը և աղոթում։ Աղոթքում ասվում էր, որ հիվանդությունը հանվում է ձեռքերից, ոտքերից, գլխից, ուղեղից, հոնքերից, աչքերից, երակներից ու հոդերից։ Կախարդուհին օգնության էր կանչում Սուրբ Աստվածամորը և բոլոր սրբերին։ Այնուհետև հիվանդությունը, անկախ նրանից, թե երբ էր հայտնվել, ուղարկում էր այնտեղ, «որտեղ ջուրը պտտվում է, մարդիկ չեն քայլում, թռչուններ չեն թռչում և կենդանիներ չեն վազվզում»։ Աղոթքի վերջում մաքրագործելու համար օգնության էր կանչում Տեր Աստծուն, Աստվածամորը, մայր հողին և բոլոր սրբերին։ Հետո վերցնում էր բաժակը, կեսը լցնում էր ջրով, մեջն էր դատարկում ձվի պարունակությունը և գուշակության միջոցով պարզում հիվանդության պատճառը։ Առանց հայացքը բաժակից կտրելու, խոսքն ուղղում էր հիվանդին և ասում. «Դու այստեղ պղպջակներ ես տեսնում, իսկ ես տեսնում եմ, թե ինչպես էիր դու երեկոյան անցնում մարդկանց միջով. քամի սկսվեց և նրա միջոցով մեջդ մտավ այս հիվանդությունը։ Լավ

---

23 Ե. Լալայան. Վարանդա, էջ 244։
24 ՊԹԱՐԱ, Կամո, Մարտունի, էջ 27։
25 Ե. Լալայան. Վարանդա, էջ 196—197։
26 Մ. Արեղյան. Երկեր. Է. Երևան, 1975, էջ 52։
27 Ե. Լալայան. Սիսիան.—«Ազգագրական հանդես», Գ, Թիֆլիս, 1898, էջ 231։
28 ՊԹԱՐԱ, Կամո, Մարտունի, էջ 28։

է, որ ինձ մոտ ես եկել, այլապես քեզ այն աշխարհը կտաներ։ Ահա թե նա հիմա որտեղ է»՝ մատնացույց անելով ձվով բաժակը[29]։

Հին Հունաստանում ևս ձուն մաքրագործող նշանակություն ուներ և որպես սրբագործող զոհաբերություն դրվում էր տների առաջ[30]։

Հավկիթը կրում է նաև երկարակեցության գաղափարը։ Փոքրիկ տղաներին առաջին անգամ տնից դուրս բերելիս նրանց ձեռքը հավկիթ էրն տալիս, որպեսզի նրանք ապրեին մինչև սպիտակամորուս ծերունիներ դառնալը[31]։

Կնունքի, նշանդրեքի, հարսանիքի, անձրև բերելու և այլ ծիսակատարությունների անհրաժեշտ պարագաներից էր հավկիթը և անկախ օգտագործման ձևից, այն խորհրդանշում էր պտղաբերություն, կյանքի շարունակություն բազմացում, հարստացում...։ Ե. Նահազիզը կնունքի վերաբերյալ գրում է, թե մկրտության խնջույքի սեղանի վրա անպատճառ դրվում է ավանդական ձվածեղը, որն ուտելուց հետո հրավիրյալներից յուրաքանչյուրը իր պարտքն էր համարում փող ձգել ձվածեղի սկուտեղի մոտ հատկապես այդ նպատակով դրված պնակի մեջ, որով հնում հատուցվել է դայակի կամ մանկաբարձի վարձը[32]։ Իսկ հրավիրված կանայք իրենց հետ բերում էին ձու, թխվածք և այլն։

Նշանդրեքի և հարսանիքի զանազան փուլերում էր հանդես գալիս հավկիթը։ Նույնիսկ նախքան խնամախոսությունը, ապագա հարսնացուի բախտն էին գուշակում հավկիթով. տղայի հարազատները գոմում մի հավի ձու էին դնում և եթե ոչխարներն այն տրորում էին, նշանակում էր, որ հարսնացուն անբախտ է և գերադասում էին խուսափել հարսնախոսությունից[33]։ Եթե նշանդրեքի օրհնեքը կայանում էր, հենց նույն օրը տղայի ծնողներն աղջկա տուն էին ուղարկում խմիչք, ուտելիքներ և կարմիր գույնի ներկած ձվեր[34]։ Հարսանիքի նախօրեին հարսնացուի տնից փեսացուի տուն էին ուղարկում գունավոր թելերով կամ մանր ուլունքներով նախշած հավկիթ, որը հարսանիքի օրը կախում էին ամենաաչքի ընկնող տեղում[35]։

Նախիջևանում և Ջուղայում փեսացուն, քավորը, խաչեղբայրը և ազապբաշին վառած մոմերը ձեռքներին, հարսնացուի նոր հանդերձը տանում էին փեսայի տուն. այդ ժամանակ զոքանչը նոր մոմեր էր դնում եկողների ձեռքը, նվերներ էր տալիս, նրանց կերակուրներով սկուտեղ էր մատուցում, որտեղ անպայման կարմիր ներկված ձվեր էին լինում[36]։ Կարմիր ներկաս ձվերը նաև փեսացուի «ծառի» անհրաժեշտ մասն էին կազմում[37]։

Եկեղեցի գնալիս ու վերադառնալիս հարսանյաց երթի ժամանակ փեսացուի ազգականները կերակուրներով սկուտեղներ էին հրամցնում մասնակիցներին և մակարները փեսացուին ձվածեղ էին ուտեցնում (քանի որ այդ ժամանակ նա իրավունք չուներ ինքը կպչելու ուտելիքին, իսկ եթե հարսնացուի ետևից փչացած ձու նետեին, նա երեխա չէր ունենա և եթե աղջկա ետև

---

29 Н. А. Никитина. К вопросу о русских колдунах.—Сборник музея антропологии и этнографии, т. VII, Л., 1928, с. 302.

30 Избранные сочинения Лукиана. В переводе с греческого с примечаниями А. И. Маннна, С.-Петербург, 1906, с. 64.

31 Ե. Լալայան. Բորչալուի գավառ.—«Ազգագրական հանդես», 9, Թիֆլիս, 1902, էջ 262։

32 Ե. Նահազիզ. Նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք.—«Ազգագրական հանդես», 7 և 8, Թիֆլիս, 1901, էջ 99։

33 Ի. Ա. Օրբելի. Топографический и этнографический очерк Мокса.—«Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 2 էջ 278։

34 Ե. Լալայան. Բորչալուի գավառ, էջ 217։

35 ՊԹԱԲԱՍ, Հոկտեմբերյան. Էջմիածին, Աշտարակ, էջ 13—14.

36 Բաշերունի. Հայկական սովորություններ.—«Ազգագրական հանդես», 7—8, էջ 177։

37 Ա. Շ. Սնացականյան. Հայկական զարդարվեստ. Երևան. 1955, էջ 100։

շպրտեին, նա չէր ամուսնանա[38]։ Առհասարակ, շար կախարդանքի համար օգտագործում էին փչացած ձվերը. օրինակ, որևէ մեկին չարիք պատճառելու նպատակով թխսկանի տակից հանած փչացած ձուն թաղում էին նրա տան շեմքում[39]։

Անձրև բերելու ծեսի ժամանակ մինչև հիմա էլ գյուղերում, երբ երաշտ է լինում, երեխաները «նուրին» տիկնիկը ձեռքներին տնետուն են գնում և երգում։ Տան տերերը նրանց տալիս են ձու, յուղ, ալյուր և տիկնիկի վրա ջուր են լցնում։

Հացահատիկի բերքատվությունն ապահովելու ծեսում սերմերի մի մասը ձվի հետ փաթաթում էին մի թաշկինակի մեջ, տանում էին եկեղեցի, օրհնել տալիս, ձուն նվիրաբերում էին եկեղեցուն, որից հետո միայն ցանում էին սերմերը[40]։

Տոնակատարություններից ձուն առկա է Համբարձման, Վարդավառի, Ս. Ծննդյան և Զատկի ժամանակ։ Համբարձման տոնին, երբ տարվա մեջ ամենաբազմապան գուշակություններն ու կախարդություններն էին կատարվում, ձուն կիրառվում էր հմայության նպատակով. գիշերը տանտիկինները երկու եփած ձվի միջից մի կապույտ թել էին անցկացնում և թաղում էին հարևանի բակում, որպեսզի հարևանի յուղն իրենց գար։ Երբ կախարդանքն ազդում էր և հարևանի յուղը պակասում էր (լավ չէր հարվում), մի ձու էին տալիս չար աչքի դեմ աղոթելու և պահում էին առաստաղի գերանի տակ[41]։

Վարդավառին աղջիկները տնետուն էին գնում և ծաղկեփնջեր բաժանում, փոխարենը ստանալով ձու, յուղ, բրինձ և այլն[42]։

Ձուն նման ձևով էր հանդես գալիս և Ս. Ծննդյան տոնի ժամանակ. այդ օրը քահանաները ժողովրդին նշխարք էին ուղարկում երիտասարդների ձեռքով, իսկ ստացողները, ի պատասխան, նրանց երկու ձու և ընկույզ էին տալիս։ Ձու էին տալիս նաև ավետիս ասող երեխաներին, երբ շրջում էին տնետուն[43]։

Ամենակարևոր դերը ձվին հատկացվում էր Զատկի տոնին, երբ առաջին հերթին այն օգտագործվում էր որպես նվիրաբերություն և ընծա։ Այդ օրը Հայաստանի տարբեր շրջաններում նշանված երիտասարդների տնից աղջկա տուն նվեր էին տանում ներկած ձվեր, գառ, մրգեր և խմիչք[44]։ Ախալքալաքում նշանված աղջիկներին եկեղեցում մոմերով զարդարված ձու էին նվիրում[45]։

Ջուղայում, Զատկի առավոտը եկեղեցում, երբ սկսում էին «Փառք ի Բարձունս», յուրաքանչյուր սանահայր իր կնքավորին մատուցում էր 20—30 կարմիր ձու և թևերը վառվող խաչաձև մոմ՝ ամրացված մի ձվի վրա[46]։ Նվ դոկիայում Զատկի տոնը շնորհավորելու եկած հյուրերի երեխաներին անպայման կարմիր հավկիթ էին նվիրում[47]։

Զատկին ձու էին նվիրում ոչ միայն ազգակցական կամ այլ կապերի մեջ գտնվող մարդկանց, այլև այս աշխարհից հեռացած մարդկանց հոգիներին։ Այսպես, Զարշարանաց ուրբաթ կամ Զատկին հաջորդող երկուշաբթի օրը ներկած ձու են տանում գերեզմանոցները։

---

38 ՊԹԱԲԱ, Ղափան, էջ 39—40։

39 ՊԹԱԲԱ, Կամո, Մարտունի, էջ 4։

40 Ա. Պետրոսյան. Շերամապահությունը Հայաստանում, էջ 4։

41 Ե. Լալայան. Նոր-Բայազետի գավառ.—«Ազգագրական հանդես», 17, Թիֆլիս, 1908, էջ 111։

42 Քաջբերունի. նշվ. աշխ., էջ 146։

43 Ե. Լալայան. Բորչալուի գավառ.—«Ազգագրական հանդես», 10, էջ 252, 255։

44 Ե. Լալայան. Սիսիան, էջ 257։ ՊԹԱԲԱ, Կամո, Մարտունի, էջ 28։

45 Վ. Հ. Բդոյան. Երկրագործական մշակույթը Հայաստանում. Երևան, 1972, էջ 454

46 Քաջբերունի. նշվ. աշխ., էջ 126։

47 Արշակ Ալպոյաճյան. Պատմություն Եվդոկիոս հայոց. Կահիրե, 1952, էջ 1527։

Զու նվիրելու սովորությունը հայոց մեջ ընդունված է եղել նաև նախքան քրիստոնեությունը, այն տարբերությամբ, որ դա կատարվում էր Նոր տարուն[48]։ Ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում, Զատկին տարածված է ներկած հավկիթ ջարդելու ծիսական խաղը, որտեղ բոլորից շատ քանակությամբ հավկիթ ջարդողն է հաղթում և վերցնում ջարդած հավկիթները։

Զատկի ձվերը ներկում էին տոնին նախորդող տարբեր օրերին, որոնցից և կախված էր նրանց մոգական նշանակությունը։ Ինչպես վերը նշվեց. Գեղարքունիքում ձվերը հինգշաբթի օրն էին ներկում հիվանդության կանխարգելման նպատակով, իսկ Բորչալուում՝ ուրբաթ օրը, որպեսզի «Հուդայի աչքը պայթի»[49]։ Այժմ Զատկի ձվերը գույնզգույն են ներկում, իսկ հնում՝ միայն կարմիր գույնի և ներկում էին շաբաթ օրը, ինչպես նշում է Գրիգոր Տաթևացին.

«Եւ ներկն նշանակէ թէ՝ բոլոր աշխարհս քսի արեամբ գնեցաւ. զոր մեք ի ձեռն առեալ յայտնապէս զփրկուի մեր քարոզեմք։ Վս այսորիկ փրկուեն մերոյ է հաղորդելի նախկին. և ապա յայլ կերակուրս»[50]։ Ի դեպ, այժմ էլ ընդունված է Սեծ Պահքից հետո նախ օրհնված ձուն ուտել, ապա այլ կերակուրներ։ Հավկիթի գույնի մասին ավանդություններից մեկում ասվում է «...Քրիստոսի չարչարանքի ժամանակ մանրավաճառները փչացած ձվեր էրս տալիս երեխաների ձեռքները, որ խփեն Քրիստոսին, սակայն ձվերը առանց Քրիստոսին դիպչելու ետ էին դառնում թարմացած և կարմիր գույն ստացած։ Ի հիշատակ այս անցքի, ասում են, տնօրինել են Զատկին ձվեր ներկել»[51]։

Հայ քրիստոնեական եկեղեցու հետ կապված, ձուն հետևյալ կիրառություններն ուներ՝ այն եկեղեցի էին բերում օրհնելու նպատակով, որպես հաղորդություն և որպես նվիրատվություն։ Առաջին երկու գործողությունները կատարվում էին Զատկին և բացառապես հավկիթով, իսկ նվիրաբերությունը կատարվում էր տարբեր ժամանակներում և բացի հավկիթից օգտագործվում էին բնական ու արհեստական տարբեր ձվեր։

Միջնադարից գրավոր տեղեկություններ են պահպանվել, որ հայկական վանքերում որպես թանկագին և հազվագյուտ զարդեր են օգտագործվել ջայլամի ձվերը։ Սրանք ամրացվում էին կանթեղների շուրջը կամ կախվում դրանց կենտրոնից[52]։ Մինչև այժմ Երուսաղեմի Ս. Հակոբյանց տաճարում պահպանվել են ջայլամի ձվեր։ Այստեղ կան նաև բազմաթիվ հախճապակե նախշազարդ ձվեր, որոնք ուխտավորները որպես նվիրաբերություն են տարել վանք, ի հիշատակ որևէ անձի։ Սրանք պատրաստվել են հայկական հախճապակեգործության հայտնի կենտրոն Կոտինայում, հիմնականում XVII—XIX դդ.։ Հախճապակե գնդերը ևս կանթեղներին էին ամրացվում կամ ուղղակի կախվում էին տաճարի ներսում։ Նրանց մասին մանրամասը տեղեկություններ են հաղորդում իրենց իսկ արձանագրությունները։ Օրինակ՝ «յաս իշ[տաՀ]կ է Քոթահեծի մահտեծի նորատուլ[ն]քի որթի ածատուր. եխ. Պրնգչի քոթս» կամ՝ «Այս թոպս մղտեսի ըստեբանին հրեշտակա-

48 Զատկական հավկիթը.—«Սիոն», Երուսաղեմ, 1927, 4, էջ 105։

49 Ե. Լալայան, Բորչալուի գավառ, էջ 262։

50 Գ ր ի գ ո ր Տ ա թ և ա ց ի. Գիրք քարոզութեան. Որ կոչի ամենեան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 606։

51 Ե. Լ ա լ ա յ ա ն. Սիսիան, էջ 257։

52 Զատկական հավկիթը, էջ 105—106։ Փորագրազարդ, գունավոր և առանց նախշերի ջայլամի ձվերը տարածված էին հին աշխարհում։ Պեղումների ժամանակ միջին և ուշ բրոնզադարի սկզբի ձվեր են հայտնաբերվել Եգիպտոսում, Շումերում, Պաղեստինում, Հունաստանում, Իտալիայում, Իսպանիայում և այլուր։ Հնում Մերձավոր Արևելքում ջայլամներ են ապրել, սակայն հետագայում դրանք ոչնչացել են։ Տե՛ս John Carswell. Kutahya Tiles and Pottery from Armenian Cathedral of St. James. Jerusalem, Vol. II, Oxford University Press, 1972, p. 63—67.

պետ եկեղեցին իշատաքրն է. ...թիվըն ՌՃՁԹ» (1739), ներքևի մասում՝ «այս թիվըն ՌՃՁԹ շրսէձավ»[53]։ Քյոթահրայում հայ վարպետների կողմից պատրաստված այսպիսի գնդերն օգտագործվում էին նաև հունական եկեղեցիներում և մահմեդական մզկիթներում[54]։

Արծաթե ձվի հազվագյուտ օրինակ է պահվում Հայաստանի պատմության պետական թանգարանի ազդագրության պահոցում»։ Սա մասնատուփ է, բաղկացած երեք մասից՝ ծածկված սևագույն ու փորագիր բուսական և երկրաչափական նախշերով։ Ուշագրավ է, որ ներքևի մասի բուսանախշերն ունեն կրկնվող թռչնագլուխ նախշեր։ Կենտրոնում չորս տողանի ընծայագիր ունի՝

«1865 ԱՄԻ Մյի
ԸՆՅՅ ԱՅՍ ՄՍՆՏ ՊՆԻ
ՅՇՏԿ ՄՀՏՍԻ ԳՈՀՐ ՄԼԻՔ ՎՐԴՆՎՆ
ՔՀՆՅ ԿՐՊՏ ՏԷՐ ԱՂՔՍՆԴՐԵՆԻՆ»[55]։

Ձվին վերագրվող գերբնական հատկությունները գալիս են հնագույն պատկերացումից, որ ձուն կյանքի սաղմն է։ Այն ուղղակիորեն կապվում է աշխարհի ստեղծման գաղափարի հետ, ինչպես վկայում են տարբեր ժողովուրդների տիեզերածնական առասպելները։ Այսպես, Գրիգոր Տաթևացին գրում է. «...ձուն՝ օրինակ է բոլոր աշխարհի. ոպ ասեն իմաստունք թէ, վերին կեղևն ղերկնիցն բերէ ղնմանուի. իսկ մզղնաձևն՝ օդոյս. և սպիտակուցն ջրոյ. և դեղինն երկրիս որ է մէջն»[56]։

Առասպելի տարրերը պահպանվել են նաև հայկական հեքիաթներում։ Այսպես՝ «Օձ-Մայիլում» հերոսը ծնվում է սագի ձվից, որը գտնվում է գետնի անցքում (կապը հանդերձյալ աշխարհի հետ)։ Ուշագրավ է, որ հին եգիպտական ու հնդկական առասպելներում ևս կարևոր տեղ է հատկացվում սագի ձվին. առաջին դեպքում սագի ձվից արևն է դուրս գալիս[57], երկրորդ դեպքում (հնդկական բազմաթիվ տարբերակներից մեկում)՝ արու սագն է ձու ածում։ Սագի անունն է համսա. համ-ը հնչում է շնչելիս, սա-ն՝ արտաշնչելիս։ Երբ սագն անընդհատ շնչում է, լսվում է սա-համ։ Սա նշանակում է «այս» և «համ»-ես։ Քանի որ արու սագը Բրահմայի կենդանակերպն է, Իր անունն արտաբերելով ստացվում է, որ Բրահմայի աշխարհը լցվում է «Սա ես եմ» ճիչով։ Եվ այդ «ես»-ը դուրս է գալիս ձվից մեծաքանակ արարածների տեսքով, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին ասում է «ես»։ Նրանք բոլորը տարբերվում են միմյանցից և նրանց «ես»-ի հռչակումը դառնում է տարբերակիչ ու միաժամանակ հանդիսանում է իմացության թրի խորհրդանիշը, որը ոչնչացնում է քաոսի վիշապին[58]։

Ձվի և վիշապի մոտիվը պահպանվել է նաև հայկական գորգերի զարդանախշերում. Կապադովկիայում գործված մի գորգի վրա պատկերված են իրար դիմաց կանգնած վիշապներ, որոնց միջև ոճավորված հավկիթ կա[59]։

---

53 John Carswell and C. J. F. Dowsett. Kutahya Tiles and Pottery from Armenian Cathedral of St. James, Jerusalem. Vol. I, pp. 95, 85—86.

54 An Exhibition from the Collections of Tina and Haroutune Hazarian. Dr. Paul Bedoukian, Armenian Ceramic Art. New York, 1982.

55 «1865 ամի, 1 մ(ա)յի(սի)։ Ը(ն)ծ(ա)յ(եա)ց այս
մ(ա)ն(ա)տ(ու)պն յ(ի)շ(ա)տ(ա)կ մ(ա)հտ(ե)սի
Գոհ(ա)ր Մ(է)լիք Վ(ա)րդ(ա)ն(ո)վն ք(ա)հ(ա)ն(ա)յ
Կ(ա)ր(ա)պ(ե)տ Տէր Աղ(ե)քս(ա)նդրե(ա)նին»։ (Ե վ գ ի ն ե Մ ու շ ե ղ յ ա ն. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների. պրակ 1, Երևան, 1964, էջ 82)։

56 Գ ր ի գ ո ր Տաթևացի. նշվ. աշխ., էջ 606։

57 М. Э. Матье. Древнеегипетские мифы. М.—Л., 1956, с. 18.

58 Francis Huxley. The Way of the Sacred. London, 1980, p. 86.

59 Հ. Գ ա յ ա յ ա ն. Խաչի զարդամոտիվները կապադովկահայ գորգարվեստում (XIII—XV դդ.).—«Էջմիածին», 1977, Բ, էջ 60։

Հայկական հեքիաթներում առկա է առասպելական օձի և ձվի կապը։ Կրկին «Օձ-Մայիլում» հերոսը օձի կերպարանքով ծնվում է ձվից և հիվանդություններ բուժելու, մեռյալին հարություն տալու գաղափարները՝ կապված ձվի հետ, օձն իրականացնում է ոահացած մարդուն կենդանացնելով։ Բացի այդ, նա տուն է սարքում, որտեղ մի աղյուսը ոսկուց է, մյուսը՝ արծաթից։ Այս շինարարությունը առնչվում է Ուպանիշագաների այն դրվագի հետ, երբ անգոյից ծնվում է գոյը և զարգանում ձվի կերպարանքով, որը մի տարի մնալուց հետո կիսվում է և կեղևի մի մասն արծաթից է, մյուսը՝ ոսկուց։ Արծաթե կեղևից գետինն է առաջանում, ոսկուց՝ երկինքը[60]։ Ոսկին, իր հերթին, համապատասխանում է արևին և երկնային արքայությանը, արծաթը՝ լուսնին և ստորերկրյա թագավորությանը[61]։

Ձվի և հարստության առասպելական կապը «Օձ-Մայիլում» հանդես է գալիս հեքիաթի այն հատվածում, երբ ձվից ծնված հերոսը թագավորին նվիրում է յոթ ուղտաբեռ ալմաստ, ադամանդ, զմրուխտ, սուտակ, հակինթ։ Մի այլ հեքիաթում, երկու եղբայր ծառի գլխին հավքի ներկված ձվեր են գտնում ու կուլ տալիս և դրա շնորհիվ նրանք ամեն առավոտ իրենց բարձի տակ դրամ են գտնում, քանի դեռ ձուն իրենց փորի մեջ է[62]։ Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ հեքիաթներում, հանդիպում է ձվի ու ծառի կապը։ Լսա որում, ձուն ինչպես ծառի վրա, այնպես էլ ծառի տակ է լինում։ Օրինակ, «Ինգիշարու հեքիաթում» ծառի տակ գտնվող քնի միջի ձվից մի աննման աղջիկ է դուրս գալիս։ Թագավորի որդին նրան տուն բերելիս ճանապարհին նստեցնում է չինարի ծառի վրա։ Հետագայում նա դառնում է ռեհան, ձիու քուռակ, չինարի հսկա ծառ և այլն[63]։

Ձվի և կենաց ծառի կապը պահպանվել է նաև հարսանյաց ծիսակատարությունում. ինչպես արդեն նշվել է, փեսայի «ծառին» հավկիթ էին կախում։ Ծառի ու ձվի իմաստային կապն իր բառային արտահայտությունն ունի՝ ձվի սուր ծայրը՝ գագաթը կոչվում է «ծառ»[64]։

Հեքիաթներում պահպանվել է նաև ձվի առասպելական կապը երկնային լուսատուների, երկվորյակների ծննդյան, ժամանակի հաջորդականության, տարածության հետ։ «Գյուլշանի հեքիաթում» լույսն ու մութը բաժանողները ծերունուն մի հավկիթ են տալիս, որը գիշերը լույս է արձակում և որից ծերուկի կինը երկվորյակ է ծնում՝ մեկն Արևելքի թագավորն է դառնում, մյուսը՝ Արևմուտքի[65]։

Անդրադառնանք առասպելի և ծեսի փոխադարձ կապի վերաբերյալ Մ. Էլիադեի այն գաղափարին, որ ցանկացած ծես ունի իր սկզբնական մոդելը, սկզբնօրինակը, մարդը միայն կրկնում է արարման գործողությունը։ Ն. կրոնական օրացույցն ընդգրկում է տարվա ընթացքում նշվող տիեզերածնական բոլոր փուլերը՝ սկսած հիմնադրումից։ Իրոք, սրբազան տարին անվերջ կրկնում է արարումը, մարդը դառնում է տիեզերածնության և մարդածնության ժամանակակիցը, քանի որ ծեսը նրան տեղափոխում է նախասկզբն.

---

60 Ф. Б. Я. Кёйпер. Труды по веднйской мифологии. М., 1986, с. 119.

61 В. Н. Топоров. К реконструкции о мировом яйце (на материале русских сказок).—Ученые записки Тартуского университета. Труды по знаковым системам: Тарту, 1967, с. 93—96.

62 Հալվաճի գյուզել.—Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Երևան, 1968, էջ 360։

63 Ինգիշարու հեքիաթը.—Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. 3, Երևան, 1962, էջ 310, 314։

64 Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց. Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 330։ Հմմտ. «Исходное значение слова рай как «мировое дерево» подтверждается и более непосредственно, ср. рай-дерево «сирень», раина «пирамидальный тополь»: райник «большой лес» и т. п., или укр. райце, яйце-райце «сказочное яйцо, заключающее в себе богатство в виде скота...» (В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974, с. 248):

65 Գյուլշանի հեքիաթը.—Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. 1, Երևան, 1959, էջ 423։

կան առասպելական ժամանակաշրջանը։ Ամենուրեք գոյություն ունի որոշակի ժամանակահատվածի վերջի և սկզբի հասկացությունը՝ հիմնված բիոկոսմիկ ռիթմերի դիտարկումների վրա, որոնք մտնում են ավելի լայն՝ պարբերական մաքրագործման և կյանքի պարբերական վերածննդի համակարգը։ Ժամանակի պարբերական վերածնունդը ենթադրում է նոր Արարում, այլ կերպ ասած՝ տիեզերածնական ակտի կրկնություն, հատկապես պատմական քաղաքակրթություններում[66]։ Տոբա-բատակների նշված ծեսը (կատարվում է այժմ ևս), որտեղ անքակտելիորեն միահյուսված են ծեսը, առասպելը և հմայությունը, կատարվում է այն ժամանակ, երբ Պանե Նա Բոլոն՝ աստվածը ավարտում է իր բոլորածիր ուղին և պետք է սկսվի նոր տարին։ Կրոնահմայական այս ներկայացումը պատկերում է տիեզերքի համապարփակ նորոգումը և նրա ավերումը, քանի որ այս երկու երևույթները միմյանցից չեն տարանջատվում։ Տարեվերջը տիեզերական միաժամանակյա ավերման և վերականգնման պահն է։ Կենաց ծառը մահանում է և նրա բնից զարգանում է նորը, որը դուրս է գալիս հին ծառից ընկած պտուղից, իսկ այդ պտուղը ձու է, հետևաբար այն դառնում է տիեզերական կյանքի խորհրդանիշը։ Միսակատարության ժամանակ ձուն դրվում է տիեզերքը խորհրդանշող պատկերի հիշտ կենտրոնում և քուրմը «կենաց ծառով» (փայտե ձողով) coitus նշանակող շարժումներ է անում և ծեսի բարձրակետում ծակում է ձուն։ Այսպիսով տեղի է ունենում տիեզերքի վերականգնումը նոր բեղմնավորման միջոցով՝ որպես նոր աշխարհի և նոր կյանքի առաջին փուլ[67]։ Ահա այստեղից էլ պարզ է դառնում Զատկին և նախքան քրիստոնեությունը նոր տարուն հավկիթներ ջարդելու, սրբատեղիներում հավկիթը մեխով ծակելու կամ խաչաձև մոմը (կենաց ծառը) ձվին սմրացնելու իմաստը։ Ինչ վերաբերում է հավկիթ-պահպանակներին, ձվի հետ կապված ամենաառանձնահատուկ և ամենաուշագրավ երևույթն այն է, որ առօրյայում, անկախ տոնից ու ծեսից, ուղղակի որպես պահպանակ, նա տառացիորեն կրկնում է տիեզերածնական առասպելի այն փուլը, երբ հավկիթը դեռևս ջրի մեջ է և հանդիսանում է պահպանակների ուսումնասիրման մեջ եղակի մի երևույթ։

ЯЙЦА-ОБЕРЕГИ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ВЕРОВАНИЯХ

АСТХИК ИСРАЕЛЯН

Резюме

С древнейших времен до начала XX в. в качестве естественных амулетов в Армении употреблялись яйца кур, перепелок, ласточек и страусов. В настоящее же время в сельских местностях, реже в городах, используются лишь куриные яйца и скорлупа. Яйца оберегают от сглаза и злых духов людей (жениха, роженицу, детей), жилище, растения (урожай), животных (в том числе птиц и шелковичных червей), неодушевленные предметы (в частности, кустарные изделия и предметы, представляющие особую ценность), продукты питания. В лечебных и профилактических целях яйца непосредственно прикладывали к телу—так лечили опухший глаз, нарывы, лихорадку, а также особое заболевание, которое поражало детей во время новолуния. Яйца воздействовали также на расстоянии—как колдовское средство при лечении бородавок, их приносили в жертву с целью лечения парши, детей, поздно начавших ходить, а также для предотвращения болезней. Проме-

---

66 М. Элиаде. Космос и история. М., 1987, с. 45, 47, 66.

67 Ф. Б. Я. Кёйпер. Указ. соч. с. 132—134.

жуточной формой этих двух способов было лечение водой, которую предварительно наливали в яичную скорлупу. Яйца использовали в гаданиях и колдовстве, как в белой (здоровый приплод, обилие, снятие последствий вредоносной магии), так и черной (с протухшими яйцами) магии. В христианской обрядности яйца в основном употребляли во время празднеств Нового года, Рождества, Пасхи и Вознесения. Их освящали и приносили в дар церкви, той же цели служили и орнаментированные фаянсовые яйца, посвящаемые памяти усопших. Символическая связь яиц, являющихся полифункциональными оберегами с идеями плодородия, воскресения, новой жизни и т. п. восходит, по-видимому, к космогоническому мифу. В армянских народных представлениях сохранился образ яйца, появляющегося в первородных водах или в первозданном хаосе, идея возникновения мира (или его отдельных частей) из яйца, соотнесение яйца с мировым деревом, связь яйца со светом—тьмой, золотом—серебром, драгоценными камнями, змеей, чудесными исцелениями, способностью оживлять мертвых, появлением на свет близнецов и т. п. Показательно, что миф о мировом яйце не только периодически разыгрывается в ритуале в символическом виде (например, при разбивании пасхальных яиц), но и как бы вечно присутствует в обыденной жизни в виде яйца-оберега, погруженного в миску с водой.